

Ես տուի բաշլըդս: Մենք դնում ենք Օլ՝գլինսկայա փողոցով: Շաբրոն սուլում էր ինչ-որ մի վճռական բան:

— Մակսիմ, Տեանձում ես ձիաքարշի կայարանը—Վերայի կամուրջը: Նստի՛ր էնտեղ, սպասի՛ր: Ես մտնեմ մի տուն, ընկերիցս հարցնեմ մերոնց մասին, հօրս, մօրս մասին...

— Շոտ կը գաս:

— Իսկ՞ո՞չ: Մի մոմե՛նտ...

Նա արագ ներս խծկուեց մի մութ ու նեղլիկ փողոց և անյայտացաւ նրանում... ընդմիջտ:

Ես այլևս երբէք չպատահեցի այդ մարդուն—իմ ուղեկցին կեանքիս համարեւս ամբողջ չորս ամսուայ ընթացքում, բայց ես յաճախ իմ յիշում նրա մասին բարի զգացմունքով և ուրախ ծիծաղով:

Նա ինձ սովորեցրեց շատ բան, որ էնս գտնիլ իմաստունների գրած հաստ ֆուլիանտներում (մեծածալ գրքերում), որովհետեւ կեանքի իմաստութիւնը միշտ աւելի խորը և աւելի ընդարձակ է մարդկանց իմաստութիւնից:

Թարգմ. ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆ

* *

Ժայռի կատարից իրիկնաժամին՝
Նստած՝ ակնապիշ ես ծովն եմ դիտում.
Ալեակների հետ խաղում է քամին,
Վերջալոյսն անյոյս յօնքերն է կիտում:

Եղեգնուտի մէջ արագիւն անոթ
Խօկում է՝ թախծոտ գըլուխը կախած.
Խօկում եմ և ես լուռ ու մըտահոգ՝
Վառ անուրջների անձնատուր եղած:

Շուրջըս՝ լըռութիւն, թովի՛չ լըռութիւն,
Շնորհատու լոյսի հեղդ անէացում,
Վեհ խորհուրդների անհուն խորութիւն,
Կեանքի և մահուան դալուկ միացում:

ՌԵՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ